ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳՈՐԾԱՐԱՐ ԷԹԻԿԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔՀԿ-ՆԵՐԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈԱԼԻՑԻԱՅԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Հայաստանի իրավաբանական հիմնադրամը՝ հանդիսանալով Հայաստանի ամենամեծ հակակոռուպցիոն կոալիցիայի անդամ, որպես քաղաքացիական հասարակության ներկայացուցիչ Հայաստանում՝ գիտակցում է, որ բարեվարքությունը, թափանցիկությունը, էթիկան, ազնվությունը, հաշվետվողականությունը հակակոռուպցիոն արժեքներ են, որոնցով հնարավոր է պայքարել կոռուպցիայի դեմ և ապահովել բոլորի համար արդար և հավասար հնարավորություններ: Աջակցելով հետագայում իրականացվող գործողություններին՝ մենք հայտնում ենք մեր պատրաստակամությունը և մտադրությունը.

- աջակցել և մասնակցել երկրում հակակոռուպցիոն բարեփոխումների իրականացմանը,
- նպաստել երկրում հակակոռուպցիոն բարեփոխումների գնահատման և վերահսկման արդյունավետությանը,
- նպաստել երկրում ՔՀԿ-կառավարություն կայուն, հետևողական և հաշվետու կերպով կառուցողական երկխոսության ձևավորմանը,
- նպաստել հակակոռուպցիոն արժեքների իրազեկվածության մակարդակի բարձրացմանը հասարակության մեջ, ներառյալ գործարար կազմակերպությունների համար,
- ամրապնդել և տարածել հանրության մեջ՝ ներառյալ գործարար ոլորտի ներկայացուցիչների շրջանում, հակակոռուպցիոն ծրագրերի և արժեքների կարևորությունը, հետևողական լինել գործնականում դրանց պատշաճ կատարմանը,
- զարգացնել մեր աշխատակիցների կարողությունները, ովքեր ներգրավված են մոնիթորինգի, հանրային վերահսկողություն իրականացնելու և հակակոռուպցիոն գործունեության իրականացման հետ կապված գործընթացներում,
- արգելել մեր աշխատակիցներին, գործընկերներին և նրանց աշխատակիցներին ծավալել կոռումպացված, զեղծարար և անբարեխիղճ գործունեուներություն մասնավոր և պետական սեկտորների պաշտոնյաների ու կազմակերպությունների հետ,
- միջազգային հաջողված փորձի հիման վրա նպաստել ՀՀ-ում իրական սեփականատերերի ինստիտուտի ներդրմանը՝ աջակցելով իրական սեփականատերերի գրանցամատյանների գործարկմանը, ինչպես նաև հրապարակելով մեր սեփականատերերի մասին օրենքով սահմանված անհրաժեշտ և պահանջվող տեղեկությունները,
- ձեռք բերել հեղինակություն էթիկայի, կոմպետենցիայի և բարձր որակների դրսևորման միջոցով,
- աջակցել համազգային նախաձեռնությանը, որը նպատակաուղղված է ստեղծել արդար շուկայական պայմաններ, խթանել բիզնես գործարքների թափանցիկությանը և ապահովել լավ կորպորատիվ կառավարում Հայաստանում:

**Հայաստանի իրավաբանական հիմնադրամ**
**Տնօրեն Արտակ Սարիբեկյան**

(ստորագրություն)